## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
## № ԳՀԱՊՁԲ-20-9/3-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** **27 -ը մայիսի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Արփիմեդ» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Վ. Ղազարյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **23.12.2019թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-9/3-2** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

### 2. *Գինը և վճարման կարգը*

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***940,780 (ինը հարյուր քառասուն հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

### 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արփիմեդ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Արովյան 2-րդ մ/շրջ., 19 շ. |
| ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն | «Արդշին բանկ» Աբովյան մ/ճ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 2471000494250010 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 03519299 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Վ. ՂԱԶԱՐՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/3-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ., ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդեռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ. |
| 10. | Լորատադին, loratadine | հատ | 20000 | 18.50 | 370,000 | 10000 | 10000 | |
| 20. | Բենզիլբենզոատ benzyl benzoate | հատ | 100 | 456 | 45,600 | | 50 | 50 |
| 22. | Պերմեթրին permethrin | հատ | 200 | 960 | 192,000 | | | 200 |
| 61. | Տրիֆլուոպերազին (տրիֆլուոպերազինի հիդրոքլորիդ) trifluoperazine (trifluoperazine hydrochloride) | հատ | 500 | 5.40 | 2,700 | 250 | | 250 |
| 66. | Կլոբետազոլի պրոպիոնատ clobetasol propionate | հատ | 380 | 756 | 287,280 | 380 | | |
| 68. | Ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) phenazone, lidocaine (lidocaine hydrochloride) | հատ | 50 | 864 | 43,200 | 50 | | |
| **Ընդամենը՝** | | | | | **940,780** | | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ... վարչության պետ

ՅՈՒԼՀՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արփիմեդ» ՍՊԸ
տնօրեն

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/3-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| 10. | **Լորատադին r06ax13**/Լորատադին, loratadine/ | 33671131/501 | 370,000 | 185,000 | 185,000 | 370,000 | 370,000 | 370,000 | 370,000 | 370,000 | 370,000 |
| 20. | **Բենզիլ բենզոատ p03ax01**/Բենզիլբենզոատ benzyl benzoate/ | 33691127/504 | 45,600 | 0 | 0 | 22,800 | 22,800 | 22,800 | 45,600 | 45,600 | 45,600 |
| 22. | **Պերմեթրին p03ac04**/Պերմեթրին permethrin/ | 33691128/506 | 192,000 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 192,000 | 192,000 | 192,000 |
| 61. | **Այլ դեղորայք**/Տրիֆլուոպերազին (տրիֆլուոպերազինի հիդրոքլորիդ) trifluoperazine (trifluoperazine hydrochloride)/ | 33691176/653 | 2,700 | 1,350 | 1,350 | 1,350 | 1,350 | 1,350 | 2,700 | 2,700 | 2,700 |
| 66. | **Այլ դեղորայք**/Կլոբետազոլի պրոպիոնատ clobetasol propionate/ | 33691176/658 | 287,280 | 287,280 | 287,280 | 287,280 | 287,280 | 287,280 | 287,280 | 287,280 | 287,280 |
| 68. | **Այլ դեղորայք**/Ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) phenazone, lidocaine (lidocaine hydrochloride)/ | 33691176/660 | 43,200 | 43,200 | 43,200 | 43,200 | 43,200 | 43,200 | 43,200 | 43,200 | 43,200 |
| **Ընդամենը** | | | **940,780** | **516,830** | **516,830** | **724,630** | **724,630** | **724,630** | **940,780** | **940,780** | **940,780** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գնումների վարչության պետ

Ն. ՑՈԼՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արփիմեդ» ՍՊԸ
տնօրեն

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ